

բր կր պահանջէին: 1439ին եղաւ այս մեծ դատը, որ ամբողջ պահուած էր 'ի Սթրասպուրի, և գրպուածով մը 17հինգ գտնուեցաւ քաղաքին հին աշտարակի մը միջէն վէրբէր գրականատետին ձեւերով:

Մինչև Տրիթցեհէնի մահը գրեթէ ցորեկ տըխտեցան, որպէս զի, ինչպէս ըրինք, կարենան Ազուխկրանայի մեծ տոնավաճառին հասցընել, յոյս ունենալով թէ շատ շահաւոր պիտի ըլլար իրենց: Այս գիրքը սիրտի ըլլար Աստուածաշունչ կամ կարողիկէ մը, ինչպէս ժամանակակիցաց ստուգապատում մկայութիւններն կը հաւատարմացընեն. որոց մէջ նշանաւորներէն է Ուլրիկ Յելլ, որ քանի մը տարիէն ետքը Քոյոնիոյ առաջին տպարանը բացաւ, և Քրիզէմ քահանայն՝ որ մանկութեան աստեղ տեսած էր զԿութէմպէրի: Եւ թէպէտ այս առաջին գիրքը չհրատարակեցաւ 'ի Սթրասպուրի, սակայն ստոյգ կ'երևնայ թէ տպագրութեան խանձարուրքն այն քաղաքն եղած ըլլայ, և իրաւամբ Կութէմպէրիկի արձանը հօն կանգնեցաւ:

Մէջ բերենք Յելլի վկայութիւնը, որ նախանձորգութիւն չընող քաղաքի մը մէջ բնակելովը՝ խնդրոյն մէջ ամենին շահ մը չիկրնար ունենալ. և Այս ազնուական արուեստը, կ'ըսէ, առաջին անգամ գտնուեցաւ 'ի Մակոնցա Գերմանիայ, և մեծ պատիւ ըրաւ գերմանական ազգին: Այս էկէպն հանդիպեցաւ 'ի 1440, յորում ժամանակի Կութէմպէրի գեռ կը բնակէր 'ի Սթրասպուրի. և անկէ մինչև 'ի 1450 այս արուեստն և իրեն բոլոր վերաբերեալք կատարելագործուեցան: 1450ին յորելեան

տարւոյն մէջ սիւսան տպագրութիւնք, և առաջին տպագրուած գիրքն նկաւ լատիներէն Աստուածաշունչ մը խոշորագիր տառերով որոնցմով հիմա ճարտներն կը տըպուին: Տպարանի առաջին գտիչն եղաւ Մակոնցայի քաղաքայի մը Յովհաննէս Կութէմպէրի կամ Կութէմպուրի ազնուատուն մ'անձը »:

Ոմանք կ'ըսեն թէ Կութէմպէրի առջի բերան մտք ունեցած ըլլայ շարժական գրերով տպագրութիւն ընել, այլ թէ ուզած ըլլայ բարձրաբանդակ փայտեայ տախտակներ գործանել. կ'ըսեն դարձեալ թէ Տրիթցեհէնի օգնականութեամբն Սթրասպուրիկի մէջ քանի մ'անանուն և աննշան հրատարակութիւններ ըրած ըլլայ: Սակայն անհաւանական կ'երևնան այս կարծիքներն. վասն զի ինքը չէր կրնար չգիտնալ թէ որչափ գծուարին է 1300 էջեր փորագրել. և բոլոր Աստուածաշունչը կազմող երկու միլիոնէն աւելի տառերը:

Ուստի ստոյգ կ'երևնայ թէ Կութէմպէրիկ որ իր ժամանակակիցաց վկայելովն գրութեան նոր կերպ մը գտաւ, շարժուն գրեր կը գործածէր. տարակուսականը միայն այն է թէ արդեօք մետաղեայ էին իր տառերն թէ ոչ:

Տրիթցեհէնի ժառանգաց իրեն ղէմ բացած դատովը թէ նրիթական և թէ բարոյական օգնութիւնը կորսընցնելով բռնադատեցաւ առ ժամանակ մի թողուլ իր մտածութիւնները, և շատ տարիներ անցուց 'ի Սթրասպուրի, անուշտ իր գիւտը հասունցընելու կերպին վրայ մտածելով:

ՊԵՆԱՍԳԵԱՆ ԵՒ ՅՈՒՆԱԿԱՆ ԱՐՈՒԵՍ

Ս

Տակախն համախարհի կարծիք մ'է որ հռովմէական ճարտարապետութեան ծագելէն առաջ Իտալիոյ մէջ գտնուած յիշատակարանք բոլոր Յոյն արուեստաւորաց գործերն ըլլան: Բայց արդեօք Քերակըզգոյն չէնքերն յունական ճարտարապետութեան կատարելութեան ծայրը հասնելէն ետքը չինուեցան. որոնք չինեցին անոր մե-

հեանները, քաղաքաց պարիսպները ու աշտարակները, գերեզմանքը ու շիրմներն, որոց հոյակապ մնացորդներն կը տեսնուին մինչև հիմա. ուրիմն ետրուրական քաղաքականութիւնը հիլենականէն վերջն է: Տարօրինակ բան մ'է որ տոկուսին այսպիսի սխալ կարծիքն ունի իր կուսակիցները, մինչդեռ հմուտ մատենագիրք գիտնական փաստերով ապացուցին որ յոյն-հռովմէական ըսուած ճարտարապետութիւնն Իտալ-

լիոյ մէջ ճնամ է, և անկէջ Նլլադա անցո՞ծ
 Խտալացի գաղթականաց և կամ Յոյն այց-
 ելուաց ձեռքով: Զարմանալի է թէ ինչ-
 պէս նոյն իսկ քաջ ճարտարապետք կը
 պաշտպանեն ու կը հետևին Վիդրովիտսի
 կարծեացը, թէ ճարտարապետութիւնն ա-
 ռաջին մարդկութեան խեղճ խրճիթներէն
 յառաջ եկած ըլլայ:

Տիրենեանց, Իբերեանց և Ումբրեանց
 նախկին գաղթականութիւններէն ետքը,
 Պաղեստինէն, Եգիպտոսէն ու Ստիպէն
 ուրիշ երկրորդ գաղթականութիւն մ'ալ
 եկաւ յիտալիա, պատերազմասէր ժողո-
 վուրդ մը, որ լեցուելով Թերակզուոյն մէջ,
 միացաւ այն ժողովրդոց հետ՝ որոնք արդէն
 առանձին ազգութիւն մը ձևացուցեր ու
 ծաղկեր էին, և ասիկա եղաւ Քրիստոսէ
 տասն և վեց դար առաջ: — Եկողն Պե-
 լասզեան ժողովուրդն էր, որ իտալիոյ բո-
 լոր ազգաց դիմակալութեան յաղթելով՝
 տիրեց երկրին, քաղաքներ շինեց, և զօ-
 րացուց ամբակառոյց պարիսպներով ու
 աշտարակներով, և բերդեր կանգնեց՝ Թե-
 րակզուոյն նախկին բնակիչները հպատա-
 կեցնելու համար: Կրօնքն ու կրօնական ա-
 րարդութիւնք, արուեստք ու քաղաքային
 սահմանադրութիւնք՝ զորոնք պատմագիրք
 կ'ընծայեն այս ազգին՝ կը հաստատեն որ
 թէ և տարբեր անուններով կը կոչուէր,
 սակայն մի և նոյն ազգն էր: Հնոյն Յունա-
 ստանի պատմագիրք իբր օտարական ժողո-
 վուրդ մը համարեցան զՊելլասզեանս, որ
 իր բնիկ երկրէն հեռանալով՝ Նլլադա եկեր
 ու նոյն կողման վայրենի ժողովրդոց՝ լե-
 զու, օրէնք, արուեստ, նաւարկութիւն ու
 քաղաքակրթութիւն սորվեցուցեր էր: Ա-
 փրիկէի հիւսիսակողմը մինչև ցեղիպտոս
 բնակող ժողովուրդք և անոնք որ Միջեր-
 կրականին ծովափը կը բնակին, Պելլաս-
 զեանց մնացորդ աւանդութիւններ ու յիշա-
 տակարաններ ունին: Ատլանտիզ կղզին որ
 այնչափ հետազօտութեանց ու բնութիւնաց
 նիւթ եղած է, և համբաւեալ 'ի քերթողաց
 իր արուեստից, քաղաքական ու կրօնական
 սահմանադրութեանց և բնական ճոխու-
 թեանց համար, ըստ կործեաց բազում
 գիտնոց՝ իտալիոյ մէջ մասը եղած պիտի
 ըլլայ, և իրեն նախկին բնակիչքն Պելլաս-
 զեանք, — Ի՞նչ պատճառաւ արդեօք Ի-
 տալիոյ նախահարք ստիպուեցան թողուլ

իրենց ծննդեան երկիրը: Բնութեան այլ-
 այլութեանց հետքերն որ իտալիոյ երկրին
 վրայ կը տեսնուին, կը պատասխանեն այս
 հարցման: Ահա. որ գետնաշարժք ու ծովու-
 բուռն հոսանքն բաժնեցին երբեմն զԱփի-
 լիա՝ Կալապրիպէն, Թողլով երկիւղի ու ար-
 հաւրաց խորին աղքեցութիւն մը: Բնա-
 կիչք հրաբլիսի աւերմունքներէն ու մեծա-
 մեծ ողողմանց վտանգէն վախնալով, եր-
 կար ժամանակ չհամարձակեցան հեռա-
 նալ բարձր տեղերէն, ուր կը կարծէին թէ
 գտած ըլլան անվտանգ ապահովութիւն
 մը: Ուրիշ տեղ ամբողջ ժողովուրդներ ան-
 ընդհատ երկրաշարժէ և 'ի հրկիզութեանց
 սարսափելով, Թողուցին իրենց հին բնա-
 կութեան կողմերը ու նոր երկիրներ ապա-
 ստանարան փնտռեցին: Եւ ահա Պելլաս-
 զեանք՝ Յունաստան, Ափրիկէ ու Ստիա պան,
 դիտեցան իրենց ազգային բարգաւաճանաց
 սերմանքը սփռելով հօն, որով զանազան
 անուններով ալ կոչուեցան և կը զանազան
 աննդութիւնն որ աստուածք պատժել ու-
 զելով զՊելլասզեանս իրենց անկարգ բա-
 բուցը համար, երկրաշարժիւ ու հրկիզու-
 թեամբ, աւերմամբ հրաբլիսից և ողող-
 մամբ ծովուց ստիպեցին զանոնք երթալ
 յաբսոր: Այլ ոչ թէ 'ի մշտնջենաւոր աք-
 սոր դատապարտուած էին, այլ պիտի դառ-
 նային իրենց հայրենիքը, երբ վերածնու-
 նէին իրենց յանցանաց արժանաւոր քա-
 ւութեամբ, ինչպէս որ եղաւ:

Պատմութիւնն կը յիշատակէ Պելլաս-
 զեան գաղթականութիւն մը յիտալիա՝
 Տրոյիոյ պատերազմին ժամանակ, բերելով
 հետը բարգաւաճ արուեստներ և լի իմաս-
 տութեամբ քաղաքական օրէնքներ: Շատ
 մաստնագիրք նոյն գաղթականութեան վը-
 բայ խօսելով կը հաստատեն թէ Յունա-
 ստանէ եկած ըլլայ: Բայց Պելլասզեանք որ
 իտալիա կու գային նոր տեղ փնտռելու,
 Յոյն չէին այլ իտալացիք, որ կը վերագառու-
 նային իրենց հայրենիքը հրամանաւ պատ-
 զամին, երկար ժամանակ յՆլլադա, յԱտիա
 և 'ի Լիբիա պանդխտելէն ետքը: Նոյն ա-
 տեն Յունաց մէջ արուեստք ծաղկած չէին,
 և ոչ ալ իմաստուն օրէնքներ ունէին. վասն
 զի թէ և վայրենութեան վիճակէն ելած
 էին, այլ կը կրէին տակաւին վրանին բըր-
 տութեան ու վայրենութեան նշաններ,
 ինչպէս կը վկայէ Հոմերոս իր աստուածա-

հրաջ քերթուածոյն մէջ, Եւ երկրորդ հարկ մը չկար որ Յոյնք դադարիւր ելլային այն-պիսի ժամանակ՝ յորում Յունաստան զուրկ էր 'ի մարդկանէ, և քաջքն ու կորովիք պատերազմի հետ էին 'ի Տրոյիս:

Տրոյիոյ տասնամեայ պատերազմը լմրննալէն հոտը, Ենէտս Անքիսէս հօրը և Ասկանիոս որդւոյն հետ թողուց ասիական ասփուհքը: Ապողոնի պատգամ հարցուց և պատասխան ընդունեցաւ թէ՛ Ապալիէն այն երկիրը՝ ոսկից երբեմն քոս հարքոյ տարագրեցան: Ծերունին Անքիսէս կարծելով թէ Կրետէ ըլլայ այն երկիրը, առանց յապաղելու սկըսաւ կանգնել Պերգամէա քաղաքը: Բայց հագիւ թէ ձեռք զարկեր էր գործոյն՝ ահաւոր հիւանդութիւն մը սկըսաւ կոտորել իր մարդիկը:

Ենէտս իմանալով յանուրջս 'ի Դից, թէ Ապողոնի նշանակած երկիրն Կրետէն չէ այլ Իտալիա, դարձաւ նորէն իր նաւը և եկան նախ 'ի Միկիլիա և ապա 'ի Տրեբր: Եւ ասիկա վերջին դադարականութիւնն եղաւ Տրոյա — պելագոսան, որ չկոթեցաւ յունականին հետ, որոնք Թերակղզւոյն հարաւային կողմերը բնակելով և հօնքիչ ատենուան մէջ բազում գաղթականութիւններ հաստատելով, անուանեցին այդ երկիրը Մեծ-Յունաստան:

Ինտութեան ահաւոր այլայլութենէ առաջ եղած Իտալական ճարտարապետութեան վրայ ամենեւին տեղեկութիւն մը չունինք: միայն յիշատակութիւն կ'ըլլայ 'ի պատմութեան կնկրողական արուեստին, Միկիլիոյ Իտալական Թերակղզիէն բաժնուելէն ետքը: Ասոր գիւտը Որիոն անուն Միկիլիացւոյն կ'ընծայուի, որ ծովուն ողողմանց առջին թուամբ մը բարձրացնելու դիտմամբ որ միշտ նորանոր վնասներ կը սպառնար, Բնւրոյ հրուանդանին ոտքը ամրալէն թուամբ մը բարձրացուց և մեհնան մը կառոյց՝ նուիրելով Պոսիդոնի ծովու չաստուածոյն, որպէս զի պաշտպանէ զիրենք անոր վնասներէն: Այդ արուեստն այն պատճառաւ զուցէ կիկրոպիան ըսուեցաւ, որովհետեւ շինուածքն հսկայածէ էր, և կամ Որիոն Կեկրոպայց կամ հսկայից ցեղէն էր: Պելլասգեան ճարտարապետութեան յառաջադիմութեան յայտնի վկայք են ոչ միայն շինուածոց մնացորդներն որ կը տեսնուին ցարդ 'ի Գորգոնա, 'ի Յիէզոլէ, 'ի

Վոլչերրա, այլ և մեհնանց ու շիրմաց կոտորքն որ 'ի Տարգուիսիա, ինչպէս նաև Լրմուղներու մնացորդքն, զորոնք շինելու համար բազում ուսումն ու փորձառութիւն կը պահանջուի:



Յունաստանի ճարտարապետական ամենահին յիշատակներն Տերինտոսի ու Միկենայ պարիսպներն են. և Պուսանիոս կը պատմէ թէ կառուցած ըլլան զանոնք Կեկրոպայք ու Պելլասգեանք: Ասկէ զատ կաւանդէ դարձեալ նոյն պատմագիրն թէ՛ Ազրուաս և Իպերբոս, երկուքն ալ Միկիլիացիք, շինած ըլլան նոյն քաղաքաց արքունի պալատները: ահա Իտալական արուեստն և Իտալական արուեստաւորք 'ի Յունաստան: Յայտնի է ամենուն թէ Ինչ էր այս կողմերս ճարտարապետութեան վիճակն Տրոյիոյ պատերազմին ժամանակ: Թէ որ Դեյլիեայ մեհնանն և Աթէնքի Արիոսպագոսը կաւէ ամենախեղճ խրճիթներ էին, թէ որ աստուածութիւնք կը ներկայանային յանտաշ և 'ի խոշոր վիմաց, անտարակոյս Հոմերոսի նկարագրած պալատներն՝ մեծագին մարմարինէ չէին, և ոչ ալ գեղարուեստ սիւներով զարդարուած: Արիլեայ անմահանուն երգիչն կը զարմացնէ զմեզ երբ կը նկարագրէ իր դիւցազնոյն համբաւաւոր վահանին արուեստական զարմանագործ գեղեցկութիւնը, զոր շինել էր Հեփեստոս: Բայց այդքան զարմանալի, այդքան աստուածային գործ մը չէր, այլ պատմաբան քերթողին մտաց ծնունդն էր:

Տրոյիոյ տասնամեայ պատերազմը վեր 'ի վայր ըրեր էր բոլոր Յունաստանի տէրութիւնները: Թագաւորք և իշխանք ցեղից՝ պատերազմէն ետքը զանաւորով իրենց հայրենիքը, անիշխանութեան մէջ գտան զայն: Ե ժողովուրդք որ միշտ հետամուտը են նորութեան՝ պատրաստ էին յապտամբութիւն: Խառնակութիւնն սաստկանալով զանազան մերձաւոր ազգեր արշաւեցին 'ի Յունաստան, փոխանակելու զինան վանելով զիրենք, կամ խառնուելու անոնց հետ: Եկան նախ գորիկեան ու ետողեան գաղթականութիւնքն, և վանեցին զԱքէսպիս իրենց բնակարանէն. ետքը եկան Յու-

նիացիք, թողով զԱտտիկէ իրենց ծննդեան երկիրը, և մաս մի ապաւինեցան սա Աթինացիս՝ որոց հետ համացեղ էին, և մաս մ'ալ գրաւեցին Փոքր Ասիոյ այն մասը՝ որ սպա Յոնիա կոչուեցաւ ըստ իրենց անուանը: Քաղաքորոկան ցեղերն հալածուելով՝ բաց 'ի հեռաքնակ Նալիքոսէն, ամեն կողմ՝ հասարակապետութիւն հաստատուեցաւ, յորոց կազմեցաւ ապա զօրուոր գաշնակցութիւն մը: Չինուց այսչափ շաւաւմանց ու այնչափ փոփոխութեանց մէջ գեղարուեստը չկրցան յառաջադիմել:

Հոսերոս՝ չարժիչն յունական հանճարոյ, իր պատմական քերթուածովը ազգու մը՝ զուրմ մը տուաւ գեղարուեստից յառաջագիմութեան և մասնաւորապէս ճարտարապետութեան, որ յառաջագոյն կրօնից միայն նուիրուած ըլլալով, կոչեցաւ յայնժամ ոչ ինչ ընդհատ սիրազան և ազնուական պատճոհ մը, այսինքն յիշատակարաններ կանգնելու 'ի պատիւ քաջ և՛ առաքինի քաղաքացեաց, ոչ միայն անունին և չքնաղ գործերին անմահացնելու համար, այլ և կենդանի պահելու ապագայ սերնդոց մը՝ տաց մէջ հայրենեաց համար աշխատող և անոր սիրոյն համար կենսքերնին զոչոզ դիւցազանց յիշատակը և անոնց հետեւելու պարտաւորութիւնը: Բարւոյն սերմը ցաւունելով՝ ժողովորդեան սրտին մէջ որ երկրպագու էր գեղեցկութեան, քիչ առեռնէն արգիւնաւորեց հարիւրապատիկ: Անկախութեան ու ազատութեան հոգին գեղեցկութեան զգածման հետ միանալով, ըրաւ զՅոյնս արուեստաւորաց ժողովուրդ մը. որուն հանճարը չկաշկանդուելով յոչ մի արգելից և կապանաց, բարձրացոյց զգեղարուեստս յայն աստիճան կատարելութեան՝ որ մինչև ցոյսօր անհասանելի է:

Յունաստանի մէջ ծաղկող ճարտարապետութեան առաջին ոճն դրիկիական եղաւ: Եւրոպականն կամ գոսկանեանն, զոր տարին 'ի Յունաստանն իտալացի արուեստաւորք, և շինեցին հօն արքունի պալատներ ու քաղաքաց պարիսպներ, ետքէն աւելի ևս ճոխացաւ ու ձևաւորուեցաւ դրիկեան զարդերով, որով նոր ոճ մը ստեղծուեցաւ՝ պահելով եւրոպականին խտութիւնը և վեհմ պարզութիւնը:

Չենք սխալիր եթէ ըսելու ըլլանք որ Դորացիք կղիպտական չէնք մ'առին իրենց զարդերը, և ապա իրենք կատարեալ միաձուլութեան մէջ զրին ու զարդարեցին: Եւզիպտական թագաւորի մը շիրմին մէջ որ կը վերաբերէր վեշտասաներորդ արքունական ցեղին, որ թագաւորեց Փարաոսեանց երկրին վրայ քսան դարէ աւելի՝ Բրիտտոսի թուականէն առաջ, կը գտնուի սինազարդ գուլիթ մը, որուն սիւներն ստան և վեց կարգ խողովակաձև շինուած են, և կը բարձրանան գետնէն առանց հիման. չունին խոյակ, և որոց վերի մասին լայնութիւնն հաւասար է ստորին մասին լայնութեան: Մակասեան վերին մասը գործուած է ստամուկիաւած զարդերով, կարի հեռաւորք յիբրաց: Այս սիւներն անհակառակելի փաստ մ'են, թէ ճարտարապետութեան արուեստն մեծապէս յառաջադիմեր էր նոյն առեռն:

Յոնիացիք մտուցին ճարտարապետութեան մէջ զարդերով ճոխ նոր ոճ մը, վայելուչ քան զգորիկեանն՝ 'ի համեմատութիւնս, որ և յանուն գտողաց յոնիական ըսուեցաւ: Բայց զարմանաց արժանաւորն կորնթեան ոճն է՝ որ գերազանցեց զընաւս չքաղութեամբ, վայելչութեամբ ու համեմատութեանց ճշգրտութեամբ. և ասիկա յունական անհամեմատ հանճարոյն գիւտից մէջ գերագոյնն եղաւ:

Որչափ յառաջեց քաղաքականութիւնն և ծաղկեցան յունական հասարակապետութիւնք նիւթապէս ու բարոյապէս՝ արդիւնք իմաստուն օրինաց և զինուց զօրութեան, հասան շուտով գեղարուեստք 'ի բարձրագոյն ծագ կատարելութեան: Ասկէ վատ պարզ ու ջինջ երկիրն, խաղաղ ու քաղցր օդն, և միշտ ծիծաղկոտ ու առատալեզ բնութիւնն, զարմանալի համաձայնութեամբ օգտակար աղղեցութիւն մ'ըրին այդ ժողովորդեան վրայ, որ եռանդուն էր երեւակայութեամբ, և վատ 'ի սէր գեղեցկութեան ու հայրենեաց, ազատութեան ու փառաց, ուստի աշխարհիս վրայ չեղաւ ազգ մը՝ նկատելով նոյն ժամանակն ու ժողովուրդը՝ որ յունականին պէս հարուստ ըլլայ արուեստից հրաշալի գործերով: Աթէնք՝ որ չքնաղ աթոռ եղաւ գեղարուեստից ու ժողովարան Յունաստանի ամենընտիր հանճարոց — սկըսաւ ծաղկիլ ու

բարգաւանձել, երբ խորտակելով բռնակալաց լուծը, այսինքն Պիսիստրատեսայ և իր որդւոց, ձեռք բերաւ զազատութիւն: Քիչ ատեն ետքը իր քաղաքացիները Միլիադեսայ առաջնորդութեամբ խորտակեցին Մարաթոնեան զաշտին վրայ պարսկական փաղանգները և ազատեցին Հասարակաց Հայրենիքը ՚ի գերութենէ զոր կը սպառնար Գարեհ: Քանքսէս իր հօրե ճշման նոխարանաց ուզելով վրէժխնդիր ըլլալ ու հպատակեցնել իրեն զՅոյնս, կը ժողովէ միլիոն մը քաջամեծն պատերազմական զօրք և կը յարձակի Յունաստանի վրայ: Անցնելով Քերմոպիլեայ անցքը, ուր կ'ընկնայ Լևոնիգաս իր պատերազմակից ընկերներովը, և յաղթելով ամեն ուրեք ոչ զինուց զօրութեամբ այլ մասնութեամբ, կ'արշաւէ ընդ ամենայն Յունաստան, մահ և աւեր սփռելով ամեն կողմ: Աթէնք թողուելով իր քաղաքացիներէն, հրոյ կը տրուի ու կը կործանի: Քնմիստովէս ՚ի ջուրան Սալամինայ, Արիստիդէս և Պաւսանիաս ՚ի զաշտ Պլատեայ, կը յաղթեն ու կը ջրուեն զՅունասիան և կը ջլատեն ասիական միապետին զօրութիւնը ու գոռոզ Հպարտութիւնը: Աթինացիք դառնալով իրենց Հայրենի երկիրը, կը շինեն ու կը նորոգեն զայն նորէն այն Հարտութեամբ զոր թողեր էր Պարսից բանակի Յունաց ձեռքը գահաւիճժ փակաստեամբ: Կը բարձրանան զօրքցես յօշոնչէ մեծակառոյց պալատք ու մեհանք, թատրոնք ու յաղթական կամարք, և քանդակագարք ու նկարապատկոյց կը գեղեցկանայ Մարաթոնի դիւցազանց Հայրենիքը: Գեղարուեստից ոսկեզարն կը ծնանի յայնժամ ՚ի Յունաստան. և Աթէնք գերագանցելով միւս քաղաքները ոչ միայն ՚ի քաղաքական կարգադրութիւնն այլ և ՚ի գեղարուեստս, կը վերանայ ու բարձրանայ Պերիկլէսի ժամանակ մեծութեան ու փառաւորութեան ծայրը:

Նոյն ատենները ակնհայտ երիտասարդ մ'ազնուազարմ ու սիրելի ժողովրդեան, որուն իշխանութիւնն ու հեղինակութիւնն աւելցրր էր պաշտպանելով մեծամեծաց հակառակ կուսակցութեան իրաւունքները, ձեռք կը բերէ Հասարակապետութեան ծայրագոյն իշխանութիւնը: Այս երիտասարդն Պերիկլէսն էր, որ քաջաբան ճարտարխօսութեան հետ՝ որ զամենքը առ ինքն կը ձգէր, ունէր զօրաւոր հանճար մը, հասա-

րակապետութիւնը կառավարելու մեծագոյն յաջողութեան հետ մեծ ուղղադատութիւն. վեհանձն ամենուն հետ, և առատաձեռն առ արուեստաւորս: Ապահով իր քաղաքացեաց ձեռնտութեան վրայ, նա որ միտքը դրեր էր իր Հայրենիքը գեղարուեստից տաճար մ'ընելու, ձեռք կը դնէ հաւարակաց գանձոն, և անով կը բարձրացնէ մեծակառոյց յիւստակորաններ. սրբազան տեղերը ու հասարակաց շէնքերը հոյակապ արձաններով կը զարդարէ, և Պեկիլեայ օթեանները գեղեցիկ պատկերներով կը ճախացնէ, ներկայացնելով ազգային պատմութեան մեծամեծ գործերը: Մասնաւոր կերպով նպատաւորեալ ՚ի բնութենէ, որ իր անկշիռ պարգևներովը զարդարեր էր զՊերիկլէս, քախտաւոր եղաւ նաև անով որ իր մեծամեծ գործոց յաջողութեան արժանաւոր ընկեր մ'ալ գտաւ՝ զՓիդիաս, քաջանուն արուեստաւոր նոյն և ապա ժամանակաց, ճարտարակապետութիւնն ընծայեց յայնժամ ՚ի լոյս զարմանալի գործեր, որոց վրայ վայելչութիւնն ու գեղեցկութիւնն միացած էին ամբողջութեան հետ. և անոնց աւերակներն որ մինչև ցայսօր կը տեսնուին, կրնան մեզի պայծառ գաղափար մը տալ Պերիկլէսի դարուն մեծութեան:

Յունական ճարտարապետութեան ծանօթ գեղեցկագոյն գործն Պարթենոնն է, զոր շինել տուաւ Պերիկլէս, ճարտարապետն էին Իկտինոս ու Կալիստրատոս, Փիդիաս այլ զարդարեց Հոյակապ արձաններով: անանկ որ լամարդին Գաղղիացին այդ մեհանքը աշխարհիս բանենէն աւելի կատարեալ քարաշէն բանաստեղծութիւնը կ'անուանէ: Պարթենոնի աւերակները ամեն տեսողաց զարմանքն կը զարթուցանեն, և որոց վրայ կը տեսնուի արուեստի յետին կատարելութիւն:

Պերիկլէսի մահուանէն ետքը, անվերջանալի տարաձայնութիւնք ու պելուպոնեսական արիւսահնչող պատերազմունք՝ որ տևեցին քսան և եօթն տարի, վար առին զԱթէնս իր փառաց ու զօրութեան բարձր աստիճանէն՝ առ որ հասնէր էր զինքը իր մեծանուն քաղաքացոյն անհամեմատ հանճարն, և ստիպուելով խաղաղութիւն խնդրել Սպարտայէն՝ իր նախանձորդ յոսերիմ թշնամիէն, ծանր ու նուաւ տացուցիչ պայմաններ դրուեցան վրան:

Յայնժամ կորսրնցոց Աթէնք իր գերազա-
հուժիւնը Յունաստանի վրայ՝ զոր արժա-
նապէս ստացեր էր երբեմն իր իմաստու-
թեամբն ու զինուց զօրութեամբն: Բնկան
գեղարուեստք, և կորսուելով այն վնամ և
ազնուական մտածութիւնն աւանդելու յետ-
նոց յիշատակարանսն: Թշուամեաց յաղթող
զիւցազանց և անուանի քաղաքացեաց ա-
նունը ու գործերը, հանձարն այլ ևս չի
բորբոքեց Յունաստանի արուեստաւորաց
եռանդը: Բայց սպա Աթէնք՝ կոնոնի ձեռ-
քով յաղթելով Սպարտացւոց նաւատոր-
մին կիսթնեայ ջուրց մէջ, ազատեցաւ այն
լուծէն որով կապեր էր գնա երբեմն Ղակե-
զեմնն, և պարտեալ քաղաքաց աւարներ-
րով շինեց միւսանգամ իր կործանեալ պա-
րիպները: Արուեստք և մասնաւորապէս
ճարտարապետութիւնն ծաղկեցաւ նորէն.
և Փարոսի աշտարակը կը վկայէ թէ վերա-
նորոգեցաւ յայնժամ Պերկլէէսի դարուն
յունական արուեստին հրաշալիքը:

Արուեստից վերջին փառաւոր ժամա-
նակն յորում յունական հանձարն փայլե-
ցաւ իր բոլոր պայծառութեամբն, մակեդո-
նեան զիւցազին թագաւորութեան ժամա-
նակն եղաւ: Պատերազմասէր բայց միան-
գամայն սիրող էր արուեստից. ուստի ա-
րուեստաւորը շարունակ իրեն հետ էին ոչ
միայն արքունեաց մէջ, այլ նաև երբ ար-
շաւեց յԱսիա. յանգուզն գործ, որ յառաջ
քան զՄեծն Ալեքսանդր ոչ ոք փորձեր էր:
Արեւելեան երևակայական ճարտարապե-
տութիւնն, Հնդկաստանի շինուածոց գե-
ղեցիկութիւնն ու մեծութիւնն՝ կրթեցին
յունական արուեստաւորները նորանոր
գաղափարներով. և թէ որչափ սողեցնու-
թիւն ունեցաւ վրանին, յայտնի կը տես-
նուի ըրած գործերնէն: Տիրոսի յարձակ-
ման ատեն, ամենահաստատ թուժքով
— ճամարիտ գօրծ կիկլոպեան — միացու-
ցին զկղզին ցամաքին հետ. ուստի Ալեք-
սանդր որ նաւատորմի չունէր, այն թլու-
քով կրցաւ յարձակիլ քաղաքին վրայ: Մա-
կեդոնացի թագաւորն հասնելով մօտ այն

տեղը՝ ուր Նիղոսի ջուրերն ձով կը թա-
փին, հրամայեց ճարտարապետաց որ հե-
տը կու գային, քաղաք մը շինել հօն, և
Ալեքսանդրիա՝ զարմանալիք արուեստին,
բարձրացաւ յանակնկալս, հոյակապ ու մե-
ծագործ շէնքերով. և ողն ալ ամենաուղղի
էր, վասն զի ճամբաներն այնպիսի իմաս-
տութեամբ շինուեցան որ քումին շարունակ
պարտելով ճամբաներուն մէջ կը մաքրէր
գօղն:

Մեծատարած կայսրութիւնն զոր Ալեք-
սանդր կանգնեց բայց չի հաստատեց, իրեն
մահուամբն անկարողաց ձեռք ընկնալով՝
կործանեցաւ ու ոչնչացաւ. որուն մեծու-
թեան ու զօրութեան յիշատակը միայն
մնաց մեզի, որ կը սորվեցնէ թագաւորաց
որ բռնութեամբ կամ սրով բարձրացած
գահն, թէ որ իրեն նեցուկ չունենայ ժող-
վրդոց սէրը, կ'ընկնայ երբ փոտի կամ
խորտակի այդ սուրը: Յունաստանի քա-
ղաքներն լսելով մեծ աշխարհակալին մա-
հը, ազատութեան աղաղակը բարձրացու-
ցին. և անվերջմնայի տարածայնութիւնք
ձգեցին դարձեալ այդ եզական երկիրը ու
ժողովուրդը թշուառութեան մէջ: Այն ա-
տեն գեղարուեստից հանձարը թողուց իր
մայրենի երկիրը, և առանձնացաւ աւելի
հանգարտ ու հիւրընկալ երկնից տակ. և
եթէ փայլեցաւ նորէն ժամանակ առ ժա-
մանակ, նմանեցաւ փայլական որ կը փայլի
իր մայրենի ամպէն և մէկէն կը շիջանի: Ա-
թէնքի ու կորնթոսի գալոցաց արուես-
տաւորք գնացին յԱսիա, յԵգիպտոս, ՚ի Սի-
կիլիա և մասնաւորապէս ՚ի Հռովմ. և ա-
մեն կողմ ընդունուեցան սիրով ու պաշտ-
պանութիւն գտան. և այսպէս յունական
արուեստն տարածուեցաւ ու պտղաբերեց
ամեն կողմ ասոնց ձեռքով: Անկէց ետքը
ալ չի ծաղկեցաւ Յունաստան. իր քաղաք-
ներն կործանեցան ու յիշատակարաններն
տապալեցան, և խիստ գերութեան լուծն
ժանրացաւ իր ժողովրդեան վրայ. նախ
Հռովմայեցւոց ժառանգեց, սպա Բարբարո-
սաց և վերջապէս Տաճկաց: